# *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան28 հասցեում, ստորև ներկայացնում է **ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/4 ՆԱՃՀ** ծածկագրով ԲԱՑ ընթացակարգի արդյունքում 2014թ մարտի 05-ին կնքված նախագծային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրում 2014թ մարտի 28-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

| | |
|---|---|
| Փոփոխության պատճառ 1: | Գնման պայմանագիրը կնքվել է **Հ-284 (Մ-3)-Ջրառատ-Գայ-Ակնաշեն (Գայ-Ակնաշեն հատված) հիմնանորոգման նախագծային** աշխատանքների իրականացման համար: Գնման պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առանց տվյալ գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների: Հաշվի առնելով, որ դեռևս քննարկման փուլում է պայմանագրի կատարման համար 2014թ ՀՀ պետական բյուջեից համապատասխան միջոցներ նախատեսելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, իսկ Գնման պայմանագրի ժամկետն ավարտվում է 30.03.2014թ, անհրաժեշտ է երկարաձգել Գնման պայմանագրի ժամկետը, պայմանագրի 4.3 կետի համաձայն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև վճարման ժամանակացույցի հաստատման վերաբերյալ համաձայնագիր կնքելու համար: |
| Փոփոխության նկարագրություն: | Փոփոխվել է Գնման պայմանագրի թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույց» հավելվածի «Աշխատանքների կատարման ժամկետը» բաժինը: |
| Փոփոխության հիմնավորում: | 05.03.2014թ կնքված N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/4 ՆԱՃՀ նախագծային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ առաջատար մասնագետ Հասմիկ Օրդուխանյանին:

Հեռախոս՝ /010/ 58-05-23 :

էլ. փոստ՝ hordukhanyan@transportpiu.am:

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/4 ՆԱՃՀ- 1

**05.03.2014թ ԿՆՔՎԱԾ N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/4 ՆԱՃՀՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան 28.03.2014թ

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ԾԻԳ>> պետական հիմնարկը (այսուհետ՝ ԾԻԳ), ի դեմս պետական հիմնարկի տնօրեն Ա.Բախտամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու),մի կողմից, և <<Արցախճան>> ինստիտուտ ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Ռ.Սողոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.03.2014թ կնքված N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/4 ՆԱՃՀ նախագծային աշխատանքների կատարման պետական գնման (այսուհետև՝ Գնման Պայմանագիր) 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին Գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույնով Կողմերը համաձայնում են Գնման պայմանագրում 2014թ մարտի 28-ից կատարել ներքոգրյալ փոփոխությունը՝ Գնման պայմանագրի թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույց» հավելվածում Տեխնիկական բնութագրի վերջին՝ «Աշխատանքների կատարման ժամկետը» բաժնում «30 մարտի 2014թ» բառերը փոխարինել «25 ապրիլի 2014թ» բառերով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Գնման Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

## 3. Կողմերի հասցեները. բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության | <<Արցախճան>> ինստիտուտ ՓԲԸ |
| «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ | ԼՂՀ ք.Ստեփանակերտ, Հեքիմյան 8ա,բն.23 |
| ք.Երևան, Նալբանդյան28, | <<Արցախբանկ>> ՓԲԸ, Երևանի կենտրոնական մ/ճ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, | Հ/Հ 223076011525, ՀՎՀՀ 90009361 |
| Հ/Հ 900011321214, ՀՎՀՀ 02702598 | |
| Ստորագրություն | Ստորագրություն |